Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 719 - Ա
որոշման

«ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզում էներգախնայողությունը ապահովելու նպատակով նախատեսվում է Վայոց ձորի մարզի «Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի և «Աղավնաձորի Գրիգոր Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տանիքներին տեղադրել այլընտրանքային արևային ֆոտովոլտային կայաններ:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի, Եղեգիս համայնքի Շատին գյուղ և Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայր, սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	12,867,400 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	1) «Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ, (ՀՎՀՀ՝ 08903519, Վայոց ձորի մարզի, Եղեգիս համայնք, Շատին գյուղ, 2-րդ փողոց, շենք 17 2) «Աղավնաձորի Գրիգոր Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ, (ՀՎՀՀ՝ 08903527, Վայոց ձորի մարզի, Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայր, 3-րդ փողոց, շենք 33

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի հոկտեմբերի 25-ից մինչև 2025 թվականի մարտի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի «Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի և «Աղավնաձորի Գրիգոր Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տանիքներին այլընտրանքային արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում: Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի հոկտեմբերի 25-ից մինչև 2025 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 12,867,400 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Շատինի միջնակարգ դպրոցի և Աղավնաձորի Գրիգոր Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցի տանիքների ամրակցման, ֆոտովոլտային կայանների ոտնակների և կայանների տեղադրման, էլեկտրամալուխների անցկացման և կայաններին միացման աշխատանքների իրականացում՝ 12,867,400 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս և Արենի համայնքապետա-րաններ
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

16.10.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ